ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա.Ժ.ՊՈՂՈՍՅԱՆ

1749թ. արգասավոր էր հայ բառարանագրության համար: Մայիսին լույս տեսավ Մ.Սեբաստացու բառարանի առաջին հատորը: Իսկ մինչ այդ՝ նույն թվականի փետրվարի 17-ին, Կոստանդնուպոլսում, պատրիարք Հակոբ Նալյանի հրամանով, տպագրվեց Արսեն դպիր Կոստանդնուպոլսեցի Կեսարյանի «Գիրք սահմանաց Ցոգնաղիմի իրողութեանց» աշխատությունը:

Հեղինակի և գրքի տպագրության մանրամասների մասին որոշ տեղեկություններ են տրված բառարանի առաջաբանում: Հեղինակը Կեսարյան Հարությունի և Մյուլքյումի որդին է, ունեցել է երկու եղբայր՝ Ստեփանը և Մկրտիչը: Գիրքը տպագրվել է մահտեսի Հովհաննես սարկավագի տպարանում: Տեղի աշխատողներից Կոստանդնուպոլսեցին հատուկ հիշատակում է գրաշար տիրացու Անտոնին և սևանցի Իգնատիոսին:

Աշխատությունը փիլիսոփայական-աստվածաբանական բնույթի հանրագիտական բառարան է: Այն ստեղծվել է «ստիպմամբ բանասէր եղբարց»[1]: Բառարանի ստեղծման գործընթացը հեղինակը համեմատել է մեղուների աշխատանքի հետ: Ինչպես վերջիններս են բազմաթիվ ծաղիկներից նեկտար քաղում, այդպես էլ ինքը տարբեր աղբյուրներից հավաքել է աստվածաբանությանը, բարոյագիտությանը, քաղաքագիտությանը և բնական գիտություններին վերաբերող նյութեր, դրանք մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկել՝ հասկանալով բառարանի կարևորությունը, «քանզի այնքան օգտութիւն ունի սա, որքան է յորդահոս աղբիւրն, և առատաբուղխ վտակն՝ առ ծարաւուտ երկիր»[2]: Ի վերջո, տքնաջան աշխատանքի շնորհիվ ծնվեց իր ժամանակի համար մեծարժեք մի գործ, որի նախատիպը հայ բառարանագրության պատմության մեջ մինչև այդ չկար:

Բառարանի բառապաշարը կարելի է դասակարգել իմաստային հետևյալ խմբերի.

1. Լեզվաբանությանը վերաբերող եզրեր, բառեր և բառակապակցություններ. ինչպես՝ անուն, բայ, բան, բառ, բուք, գիր, գոյաւոր նախադասութիւն, ենթակայ, ենթաներհական հակադրութիւն, երբ, ընդունելութիւն, թեական նախադասութիւն, քերականութիւն, ուղղագրութիւն, վանկ, վերջակէտ *և այլն,*

2. Այլ գիտություններին առնչվող եզրեր, մասնագիտական բառեր և բառակապակցություններ.ինչպես՝ աստվածաբանութիւն, դիալիգտիկէ, երևակայական, զորութիւն, երկրաչափութիւն, հուբենական սահման, թափանցիկ մարմինք, թուականութիւն, իմաստական տրամաբանութիւն, տրամաբանութիւն *և այլն,*

3. Ժամանակ ցույց տվող բառեր. ինչպես՝ ամառ, ամիս, առաւօտ,

---

[1] *Արսէն դպիր Կեսարեան, Գիրք սահմանաց Ցոգնաղիմի իրողութեանց, Կ.Պոլիս, 1749, էջ 7:*

[2] *Նույն տեղում, էջ 8:*

գարուն, գիշեր, դար, աշուն, ամեռ, օր, տարի, ռոպէ *և այլն,*

4. Չափի միավորներ. ինչպես՝ գրիւն, դահեկան, դանկ, դիդրաքմայն, դրամ, երեսուն տրամ արծաթն Յուդայի, լիտր, քանքար, տաղ *և այլն,*

5. Բուսաբանական և կենդանաբանական աշխարհին վերաբերող եզրեր և բառեր. ինչպես՝ աբսինդիոս, ագռաւ, աղինջ, անտառ, ապանոս, բևեկն, բզեզ, գետնառիւծ, գինձ, դժնիկ, եկքան, եղջերուկ, թեղօշ, իժ, լաբբայ, ծառ, ռատան *և այլն,*

6. Զենքի, զինամթերքի անուններ և ռազմական գործին վերաբերող մասնագիտական այլ բառեր. ինչպես՝ աշտէ, բաբան, գումարտակ, զրահ, թիկնապահ, կապարճ, բահ, բեհ, ռազմ *և այլն,*

7. Երկնային մարմինների, բնական երևույթների անուններ. ինչպես՝ անձրև, Արեգակ, գետնաշարժ, գիսաւոր աստղ, Երևակ, Լուսաբեր, Լուսին, Լուսընթագ, կայծակ, Փայլածու *և այլն,*

8. Մարմնի մասեր, ներքին օրգաններ ցույց տվող բառեր. ինչպես՝ աղիք, ափ (ձեռքի), բերան, գլուխ, երիկամունք, եփարան (ստամոքս-Ա.Պ.), ըստինք, թուք, թոք, լեարդ, ունկ, ունչք *և այլն,*

9. Մարդկային հատկություններ ցույց տվող բառեր. ինչպես՝ ագահութիւն, ամբարիշտ, ամօթխածութիւն, անաչառութիւն, անհնազանդութիւն, առաքինութիւն, բարկութիւն, բոչախոհութիւն, գեղեցկութիւն, երկչոտութիւն, ժուժկալութիւն, խոհեմութիւն *և այլն,*

10. Կենցաղային առարկաների, նյութերի անուններ. ինչպես՝ աթոռ, ալիւր, աղ, բաղարջ, գինի, եզրահան, զամբիւղ, թաշկինակ *և այլն:*

Բառարանը բաղկացած է մոտ 4300 բառահոդվածից, որոնք բոլորն էլ հանգամանորեն մշակվել են: Այսպես՝

Հացն՝ *է գլխաւոր կերակուր մարդոյն, եղեալ ի ցորեան ալերէ՝ ջրով թրեալ, և ի թոնիրս եփեալ:*

Բևեկն՝ *է ծառ, սեաւ փայտիւ պայծառութեամբ. այսինքն, փայլամբ իւիք. և ունի զհաստատութիւն ըստ կերպի սպանոզի. ուստի եղանի սեռ իմն խիժի, և ասի արտասուք, և է անպտուղ. թէպէտ ունի զփոքրագոյն հունտս, կամ զսերմն. և ունի զփուշս ի տեղի տերևոց, զորս ոչ կորուսանէ երբէք:*

Համանուն և բազմիմաստ բառերը հեղինակը ներկայացրել է առանձին հոդվածներով: Այսպես՝

Ա(փ) *ասի թաթն այն. և մասն ինչ փոսորակն ձեռին, որ ի մատունս եղերի:*

Ափ՝ *է փոքր բուռն. և բուռն է ձեռն կծկեալ, կամ ծալեալ:*

Ափն՝ *է բերան երկրին. զոր բախէ ջուրն գետոյն: Ասի ևս վասն նգերն. յոր հոսի ջուրն և բախէ:*

Ափն՝ *է շուրթն. կամ քարայատակն ծովուն, և վերջին սահմանն:*

կամ՝

Ամուսնութիւն՝ *է զուգաւորութիւն առն՝ և կնոջ. ի յորդէծնութիւն, կենցաղոյս կցորդութիւն:*

Ամուսնութիւն՝ *է արուի, և իգի զուգակցութիւն. որով փոխաբերապէս կապակցին առ մշտնջենաւոր կենի ընկերակցութիւն:*

Ամուսնութիւն՝ է խորհուրդ եկեղեցւոյ. կացուցեալ վասն անքակտելի ընկերակցութեան առն՝ ընդ կնոջ:

Բառարանում Կեսարյանը ընդարձակ և հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Արեգակի, Լուսնի, Արեգակնային համակարգության մոլորակների, կենդանակերպի նշանների, տարբեր հիվանդությունների և այլնի մասին: Մեր խոսքը հաստատելու համար ներկայացնենք քաղցկեղ բառահոդվածը.

Քաղցկեղ՝ է տեսակ իմն խոցի չարագոյն, որ պատճառի ի մելամաղձէ կարի ջերմացելոյ: Ոչ մնայ ընդ միում ևեթ անդամում յոր արտասուզի, այլ ծրի անդուստ առ յայլս անդամս՝ նեխեցուցանելով զվէրս, և ծախելով զմիսն: Ուստի և յանգաբար կոչեցաւ քաղցկեղ. այսինքն քաղցեալ խոց. զի ոչ յագի միով ևեթ մասամբ անդամոյ, ճարակ խնդրեալ շրջագայի, մինչև սպառեսցէ զբնաւն: Գոյ և այլ իմն տեսակ այսր կեղի, զոր խեցկեղ յարանուանեն. այսինքն. խեցգետնային կեղ. վասն զի հանդարտիկ իմն տարածի առ յայլս անդամս, հանգոյն խեցգետնի՝ որ յամրաշարժ է: Եւ կամ զի ունի հուպ վիրին. զերակս տարածեցեալս իբրև զբազումս խեցգետնայինս. և կամ յանդգնաբար յենլոյն սակս, ըստ որում առնէ խեցգետինն, մինչ ոչ կարիցե ճանկիւք իւրովք ըմբռնել զիրն: Ընդոստնու և խոցս այս՝ ի նոյնոյ պատճառէ. և բաց յայլոց անդամոց, սևեռի մանաւանդ ի ստինս կանանց, յորժամ ոչ լինին մաքևեցեալք ամսեմնեաւ:

Աշխատության վերջում «Հիշատակարանում», Կեսարյանը նշում է, որ բառարանի մեջ իր հավաքած նյութի մի մասն է միայն զետեղված.հակառակ դեպքում այն չէր կարող տեղավորել նախապես որոշված ծավալի սահմաններում: Միաժամանակ հեղինակն ընթերցողին խնդրում է ներողամտորեն վերաբերվել եղած թերություններին, քանզի ինքը իր ձեռքի տակ չի ունեցել նմանատիպ բառարան:

Կարծում ենք, որ սա չի նսեմացնում գրքի արժեքը, որը, հայ իրականության մեջ առաջին հանրագիտական բառարանը լինելով, աներկբայորեն իր դերն է ունեցել հետագայում նույնատիպ աշխատություններ ստեղծելու գործում և ուրույն տեղ է գրավում հայ բառարանագրության պատմության մեջ:

ПЕРВЫЙ ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ

А.Ж.ПОГОСЯН

Резюме

Первый энциклопедический словарь на армянском языке, составителем которого был Арсен Кесарьян, вышел в свет в 1749 году в Константинополе. Словарь содержал сведения по богословию, этике, политологии и естественным наукам.

Автор включил в словарь весьма интересные и пространные сведения о небесных телах, различных заболеваниях, знаках зодиака и так далее.

Словарь содержит около 4300 словарных статей.